

ՀԱՄԼԵՏԻ ՄԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

«Ահա վերջապես մենակ եմ» մենախոսությունը, որ պիտի բացատրեմ, և որն ըստ Մալոնի մեկնության վերջակետում է երկրորդ արարվածը... Թող թույլ տրվի ինձ հայտարարել, առանց խելագար կարծվելու, թե այստեղ ոչինչ չի վերջակետվում, ինչպես ոչինչ չի սկսում, այլ արդեն եղածի շարունակությունն ու բնական բացատրությունն է, թեկուզ տասը վարագույր իջնի այս կետի վրա և միջնարարը, որ հանգստի մի ըուպե է կարծվում ամեն ներկայացման ընթացքում՝ խտացումն է ու հագեցումը հանդիսատեսի գրգռված մտածողության, որ ինքն իրեն ու սրահի հետ ավելի շուտ կոխվ է, քան կատարվածը որոճալու համար պայմանական միջոց:

Ենթադրում եմ, որ սա մահվան վճռի իրագործման սպասող ըուպեի պես է մահապարտի համար, մինչ դահիճը տապալրը շողացնում է նրա կառափի վրա:

Ես, որ սիրում եմ կատակել հյուրերիս հետ ամեն միջնարարին, այստեղ սեղմված են շուրթերս հակառակ կամքիս, դառնում եմ շար, անհաղորդ մի մարդ, և չափում եմ բեմը տենդոտ քայլերով, եթե չեմ փակվում իմ զարդասենյակում... յոթը կողպեքի ետևում: Որովհետև չեմ կարող, ավելի շուտ, բառեր չունեմ մարդկային իմաստականության հաղորդելու այն, ինչ կատարվում է ինձ հետ այս ըուպեին, ինչպես և ինչ էլ որ լինի բեմը, բեմագրությունը, ես ու հանդիսատեսը:

Միշտ ցանկացել եմ այս ըուպեին նետվել հատակին ամբողջ հասակով, ճանկոել հողը, թշվառ գլուխս խփել սալաքարերին, որ ինձ կարենամ ազատել մտածելու տանջանքից. և եթե դիմադրել եմ այդ հախուռն ցանկության, ապա էթիկայի կաշկանդող օրենքների պատճառով միայն:

Նդել են օրեր, երբ ուզեցել եմ փախչել թատրոնից այս ըուպեին, դուրս գալ փողոց, մարդկանց մեջ և մարդկային աղմուկի մեջ խեղդել իմ մեջ բողոքող մարդու ձայնը:

Իսկ այս վերջին տարիները, երբ դատողությունն ու հասուն տարիքը ավելի զգաստ են դարձրել ինձ, այդ վերոհիշյալ երևույթները նույնպես իրենց կարողին հասունացել են ու դարձել մի տեսակ ինքնակշռում՝ ամենախոր մտեցումով, որ էությունս քայքայում է, ճիշտ է, ինչպես առաջ, բայց և այնպես քայքայվելիս հավաքվում է միևնույն ժամանակ ու եսը իմ մեջ չի տարրալուծվում:

Այս բույսին ոչ սբի հետ չեմ կարող կատակել, ինչպես առաջ էր այդ, բայց կատակում եմ ինքս ինձ հետ ու ոգևորելով ինքս ինձ, իմ սեփական ուսերից բռնած ստիպում եմ ինձ բռնի դիտել իմ ներքնաշխարհը:

Ահա ինչպես սովորեցի ողբերգության այս կեսում չվախենալ ինքս ինձնից՝ կամովին ենթարկվելու համար հեղինակի ստեղծած պայմանականությունները բռնում ու կերպարը լինելով հանդերձ, կամ վերածվելով ըստ կերպարի, ինքս մնալ իմ եսով:

Սա մի տեսակի, կամ իրատեսակի ծնունդ է, կամ ծնունդների մի շարք, անկախ սեփական ծնունդից, որով կամ և լինելու եմ մինչև փակեմ աչքերս, այո՛, ծնունդների մի շարք, որի իրականացումը իմ կամքի արդյունք է, ճիշտ է, բայց, որից խուսափելը դուրս է իմ էության հնարավորություններից, հետևաբար իմ կամքից կախված չէ:

Թող մութ շփվա քեզ, սիրելի ընթերցող, այս ինքնաքայքայման պրոցեսը, որն ավելի պարզ ու հասկանալի բացատրելու համար պակասում են բառերը և նման կետերի բացատրության համար է, որ ցանկություն եմ հայտնել բառեր ստեղծել, անուն տալու համար հոգեբանական դրություններին, որովհետև անհատակ մի օվկիանոս է հեղինակի այս գործը:

Սակայն մոտենանք անբասին:

Համլետ.—Ո՛հ, ինչպիսի՜ ռամիկ ստրուկ եմ ես:

Հոգեպես փակ զոնների առաջ պատասխան ու ելք փնտրող թշվառ պատանին կառչելով քիչ առաջվա դերասանի խաղին թե ինչո՞ւ և ինչպես մի օտար ու անցյալ պատմություն պատմելիս այդ խեղճ թափառական դերասանը, որ դուցե և հաց չունի այսօր ուտելու Հեկտորի խաթեր արտասուք է թափում, դարմացած, շփոթված ու թշվառ, հարց է տալիս ինքն իրեն, իր ձեռքով քանդված այդ սրահում, թե «Հեկտորը նրա ի՞նչն է, կամ նա Հեկտորին ի՞նչ, որ նա նրա համար այդպես լաց լինի», և պայթում է նրա սիրտը բաղդատելով դերասանի երևակայական վիշտը իրական գծրախտության հետ, որ իրենն է և ըմբոստ ցասումով ավելացնում. «Ինչ կանեի ապա նա, եթե ինձ նման աշխարհի կրթերը ալեկոծելու առիթ ունե-նար»:

Եվ, թվելով մեկ առ մեկ թե ի՞նչ կաներ նա, ինքն իրեն դնում է այդ անտուն դերասանի տեղ և հետզհետե անդգալաբար խոսում է այնպես, ինչպես դերասանն էր խոսում քիչ առաջ:

Համլետ.— Նա ամբողջ բեմը արցունքի հեղեղով ջրասուլզ կաներ: Ունկնդրած ականջը նա կհոշոտեր, հանցավոր մարդուն խելագործի կաներ ու նույնիսկ անմեղին կսարսափեցնեի, նրա աչքն ու ականջը նման պատմությամբ մաս-մաս փրթնելով:

Այս կտորը Համլետը պետք է արտասանի մեծատաղանդ վարպետ դերասանի նման շեշտելով, և միևնույն ժամանակ զգալ տալով հանդիսատեսին, թե դերասանություն չէ այդ, չի եղել երբեք և չի լինելու, այլ հոգեպատառ բողոք թշվառ մի հոգու, որ իրենն է, Համլետինը, այո՛, բայց իր վարակիչ ուժով բոլոր թատրոնինը, բոլոր սրահինը և սրահից դուրս փողոցում քայլող բոլոր մարդկանց ու այդ բոլորից ավելի քաղաքի ամբողջ բնակչությանը և բոլոր մարդակերպ ծնունդների, որ հորջորջվում են որպես մարդ, արտասվում են, հրճվում, ուրախանում նույն կերպով, որով Համլետն է խոսում բեմի վրա:

Այստեղ է, որ դերասանի խաղից անցնելով դեպի ինքնաքննադատում, անվանում է իրեն թանձրամիտ ու ցեխահոգի թշվառական. և հուսահատ այդ ինքնաքննադատումից սահում է դեպի ինքնախարազանում՝ խոր արհամարհանքով դեպի իր սեփական անձը ու շարունակում. «հալվում, մաշվում և մտամոլոր խեղճ Ջոնի նման, անփուլթ սեփական դատիս, չեմ կարողանում նույնիսկ բողոքել»,— և այստեղ է, որ հոգեկան խորին տվայտանքով գտնում եմ պատճառը իմ հոգեկան անհատակ անկման և կառնում եմ այդ պատճառին կարենալու համար որպես մարդ մնալ աշխարհում. «ոչ մինչև իսկ ի սեր մի թագավորի, որի գահի դեմ, որի կյանքի դեմ նման դիվային ոճիր է գործվել»:

Իսկ այստեղ, կորած հուսահատության լաբիրինթոսում, ինքս ինձ եմ որոնում և անջատված կտորտանք ու մասեր եմ միայն գտնում ինձնից, որ կայի և հիմա չկամ: Եվ տաժանելի ենթադրություններ տանում են ինձ կասկածի ծովերի վրա. «Վախկո՞տ եմ, ի՞նչ է»՝ դիմելով սրահին ուզում եմ, որ գոնե մեկն ինձ սրիկա անվանի, գանգս ջախջախի, մորուքըս փետի, երեսիս զարկի...

Այնքան եմ հիմա հեռու ես ինքս ինձնից ու այնքան օտար ինքս իմ հանդեպ, որ ուզում եմ մեկը սրահում լինի այն, ինչ եղել եմ ինքս անցյալում ու մենամարտելիս ինձ՝ թշվառիս հետ, սուրս ետ կոխի կոկորդիս մեջ մինչև թոքերս:

Հետո անձկանաք նաչում եմ բեմից դուրս գեպի անջրպետ, փնտրելով կարծես այն, որ հիմա չեմ, որը սակայն եղել եմ ու պատասխան չգտնելով իմ որոնումին, գալարվում եմ գեհենի կրակից աչրվածի պես և ամբողջ հողիս մի աղաղակ է. «Հա՛, այդ բոլորը ես կտանեի, քանզի անպատճառ ես աղավնու լյարդ պետք է ունենամ. պետք է որ լեզի չլինի իմ մեջ, քանի որ աչքքան անիրավություն չի դառնացնում ինձ, այլապես վաղուց այդ սրիկայի փորտափքով երկնքի անդգներին կկերակրեի»:

Եվ անգորությունից հուսահատ գլուխս ձեծելով ու արտասովթոր թուլանում եմ մի աղջկա պես, մինչև գտնում եմ ելք այդ կոշմարից, քիչ առաջ ինձ այցելած դերասանի խաղը վերհիշելով:

Համլետ.— Ա՛յ դու արշունոտուշտ պաղշոտ սրիկա, անխի՛ղճ, անօրե՛ն, անանուն դու շուն, ի՛նչ ավանակն եմ, ի՛նչ քաջություն է, որ ես զավակս մի սպանված հոր, որին անդադար երկիրք ու երկիր ի վրեժ են կանչում, իմ սրտի մաղձը բառերով թափում եմ միայն մի բողի նման և կամ հայհոյում մի պոռնիկի պես, ամո՞թ է, Համլետ, ամո՞թ է, ամոթ:

Երկար արտասովուց հետո մի տեսակ խաղաղություն է իջնում ինձ վրա, ակնարկս մեխված անջրպետի մեջ կարծես մի բան է տեսնում, մի անմարդկային ու սարսափելի բան, որ քաշում է ինձ գեպի իրեն անդիմադրելի կերպով: Առաջվա լալկան, շփոթված պատանին տեղի է տալիս ջղուտ մի ասպետի պատկերին իմ մեջ, ձայնալարերս ձգվում են և խոր ու թավ չարաշուք մի շեշտ տալիս խոսքերիս: Եվ ցածր ձայնով, դրեթն մի ռեգիտարի վրա ասված խոսքերով, լարված՝ աղեղի նման, քարացած՝ հարձակման պատրաստ հովադի նման, հավաքում եմ մկանունքները ուսերիս, մեջքիս և ճակատագրական ձայնով, որ իմը չէ, չի եղել երբեք, որ հանդիսատեսը դեռևս չի լսել և որը սակայն իմ էությունն է, իմ ամբողջ անձը, որի յուրաքանչյուր վանկը թունոտ դաշույն է կամ արդարության ձեռքը զարդարող սուրբ պատժի գործիք, հետևյալ խոսքերն եմ թափում շրթներիցս մարգարտի պես սառն, մարդարտի պես թանկ ու մարդարտի պես էլ անխոցելի, սակայն խոցելի իրենց բնույթով և վերջացնում եմ գործողությունը հետևյալ խոսքերով. «Սթափվիր, իմ միտք, արձակիր կապերդ դու, թշվառ լեզու, ես լսել եմ, որ հանցագործները թատրոնում նստած լավ ներկայացված մի տեսարանից այնպես ցնցվել են, որ իրենց ոճիրը իրենք հայտնել են:

Սպանութիւնը թեև անլեզու, համամարդկային լեզվով խոսում է, երբ այդ ուզում է: Պետք է այս նորեկ դերասաններին հորեղբորս առաջ մի բան խաղալ տամ, որ հար ու նման կրկնութիւնը լինի իմ հորս մահ-վան, իսկ ես կնայեմ նրա աչքերին, վերքը կխառնեմ, ցնցվի թե չէ, դիտեմ ինչ կանեմ»:

Աշխարհի բոլոր որբերգունների գործը այս կետին հասնելուց հետո պետք է վերջանար դաշույնի մի լավ հարվածով՝ հանցավորի սատակումով: Կամ եթե պատժողը իրոք որ թույլ մի մարդ է, ողբերգութիւնը կվերջանար պատժողի անձնասպանութեամբ:

Այդպես են արել բոլոր թատերագիրները, ի բաց առջալ էսքիւսից, որ իր հերոսին հասցնելուց հետո վերոհիշյալ կետին, մահու ինքնամոռացութեամբ չի դարձանում նրա ցավերը, այլ ստիպում է նրան միջոցներ գտնել վրեժ լուծելու... Ուրեմն և ապրել:

Այսպես է Պրոմէթէոսը: Այսպես է Օրեսթեսը:

Իսկ այստեղ, «Համլետում», մենք տեսնում ենք տառապանքի շարունակութեան մի նոր ու երրորդ ձևը, ավելի դենը քան մահն ինքը, քան անէացումը անհրաժեշտ ելք գտնելու որոշումով շարչրկված մի հոգու և որը գտնում է այդ ելքը հակառակ իր սպանութեան գաղափարի մերժման, հակառակ տարերքի արգելքին, հակառակ իր ներսից գոռացող խղճի խայթին, հակառակ հանդիսատեսի սպասումին, ոչ իսկ մի պարզ դաշույնով, այս սեղմված ատամների արանքից լցված մահաբեր թույնով արգեն թունավոր և մահամերձ մի հանցավոր հոգու՝ ոտքի մի հարվածով գլորելու համար անէութեան փոսը:

Սակայն հեշտութեամբ չի հասնում Համլետը այդ եզրակացութեան: Ոճրագործի հասցեին ուղղված վրեժ բառը աստվածային անբաւ շնորհի և ներողամտութեան մի պահանջ է միևնույն ժամանակ: Եվ խոսքերը, որով նա վերջացնում է այս հրաշալի մենախոսութիւնը, իրենը չեն, կամ իրենը լինելով, անկեղծ չեն, այլ պատրվակ են ժամանակ շահելու, թեկուզ մի ակնթարթի շփով, վրեժի գործը իրենից վանելու մի անհույս փորձ, մարդկային բնավորութեան աղոտ գծերի պատկերացումը՝ մի ստվերի նման, որ իր աղոտութեամբ իսկ մարդկային հոգու աղաղակն է, թեկուզ այդ հոգին ջրամույն լինի անհատակ ծովերի անդունդներում:

Համլետ.— Ես լսել եմ, որ հանցավոր մարդիկ թատրոնում նստած այնպես են տարվել տեսարանի հնարքից, որ իրենց ոճիւրը իրենք են հայտնել: Այդ դերասաններին ներկայացնել տամ այնպիսի մի բան,

որը հորս սպանման շատ նման լինի, իսկ ես կդիտեմ արքայի աշ-
փերը, թե նա ալլալովեց, ես անկիրքս դիտեմ:

Չգիտեմ խեղճ իշխանը իր անելիքը, որ եթե թագավորը ալլալվի ան-
գամ՝ ուս ժամանակ շահելու մի պատրվակ է, մի շարաքաստիկ ինքնա-
խարհություն, որը նման է ինքնահամոզման. «Ուրվականը, որին ես
տեսա էսխիսորում, գուցե մի գե է և դեր կարող է մեզ համար հաճելի մի
երևույթ ստանալ»:

Տեսնո՞ւմ եք մինչև ուր է իջնում թշվառը, չի տատանում իր հոր
ուրվականն անգամ գեի նմանեցնելու, ազատելու համար իրեն մարդ
սպանելու մղձավանջից ու եզրակացնում է, թե ներկայացումը լուկ մի
ծուղակ է, որի մեջ նա հույս ունի բռնել արքայի խիզճը... մոռանալով,
որ ինքն իրեն փակեց նման ծուղակում ձեռքերը մեղավորի արշան մեջ
թաթխելու վախից:

Այս է Համլետը:

Եվ որովհետեւ այս է Համլետը և ոչ այլ բան, ապա չպետք է մոռենալ
այս խորհրդավոր ստվերին, եթե չունես հնարավորություն բացատրել
այդ: Ես հավատում եմ, որ կարող ես զգալ, ինքդ բո մեջ վերապրել այդ
լավուղ հրեհ, բայց որպեսզի ներկայացնում լինի բո այդ վերապրումը,
պետք է կարենաս թատերապես ցուցադրել բո վերապրածը: Ալլապես
ինչո՞ւ հանդիսատես, ինչո՞ւ ներկայացում բեմադրող, ինչո՞ւ թատրոն,
վերջապես: Եվ գործի այս երկրորդ արարի անհատական թե կոլեկտիվ
ըմբռնումից ու պատկերացումից է կախված նրա ամբողջականությունը:
Նման մի գործ կաղմող դանադան մասերի հույակապ վերապրումներ շատ
եմ տեսել: Բայց զրանք եղել են մասերի ներկայացումներ միայն, իսկ
ամբողջությունը վթարվել է միշտ ու անհետ կորել: Օրինակ, մինչև հիմա
չեմ կարող հասկանալ, թե ինչու Յակկոնին, լավագույն համլետներից
մեկը ի միջի ալլոց, խուսափողական շրջադարձ էր կատարում, հենց որ
հասնում էր երկրորդ գործողության այս եզրափակիչ մենախոսություն:
Նման մի բան անում էր Մոնեն, որին մի քանի դիշեր շարունակաբար
տեսնելուց հետո իդուր եմ փնտրել նրա խաղի մեջ այս մենախոսությունը
իր լրիվ մեկնաբանությամբ և ցավալի կտորտանքներ եմ գտել միայն
առանց ամբողջության: Անցյալ դարու լավագույն Համլետը՝ Ռոսսին,
այս մենախոսությունը որոշ փոփոխությամբ ձուլում էր «լինել, թե չի-
նել»-ու հետ և այս կերպով խաթարում առաջին մենախոսության իմաս-
տը, իսկ երկրորդը՝ աղբատացնում:

Կարգա ժամանակակից անգլիական մամուլը. նման մի բողոք ևս կգտնես նույն տարիներին «Նովոյն վրեմյայում»:

Ինչպե՞ս էր անում, ինչո՞ւ էր անում և ինչպե՞ս այդ բողոքով հանդերձ բեմերի վրա Համլետ էր մնում: Այդ իր գաղտնիքն էր:

Ես երկար ժամանակ ուզեցի լուսաբանել այդ գաղտնիքը, իմ հարցումներով անհանգստացրի շատ ու շատ մարդկանց, և լավագույն բացատրությունը Մնակյանը տվեց ինձ մի օր Պոլիս՝ Քուշ-Դիլիի փայտաշեն թատրոնում. «Օղլո՛ւմ, Ռոսսի ըսածդ մեծ դերասան մըն էր, ամա քիչ մը ճամպազ էր»:

Հետագայում ճիշտ նույն իմաստով բացատրություն տվել է ինձ և Սիրանուշը. «Մանչս, անոր կերած ապուրները մենք ուտեինք նե, մեզի ցիցին տեփեն կհանեին: Ամա ինչ ալ ըներ նե, կենե Ռոսսին միակ Համլետն էր»:

Մոխին Մոսկվայում նույնանման մի մեղք գործում էր: Միխայիլ Ջեխովը նույնպես: Եվ դրեթե մեծամասնությունը իմ բողոք տեսած համլետների, բացի Շորշտեյնից, որ ապավինած միմիայն իր հանճարին, լողում էր այդ օվկիանոսում, օվկիանոսի օրենքներով և լավ էր անում:

Նույնիսկ հակառակ այն ահավոր մղձավանջին, որը տիրապետում էր ինձ գործի այս կետում ներկայացման միջոցին և որը քեզ բացատրելու առիթ ունեցա մի քիչ վերելում, ճիշտ է, ունեցել եմ ներքին շփոթի լուպեններ, երբ իմ ներսի դեը մղել է ինձ նույն շրջադարձին, բայց մահվան կովով եմ մաքառել նախ ինքս ինձ հետ:

Ահա թե ինչու, այսօր, այս ժամին, մահացու մեղքերով «ծաղկած» իմ խիղճը, նման մեղքից անմասն է մնացել:

Սառա Բեռնարը ընկճվում էր այս տեսարանում:

Բոլոր կին համլետների մեջ միայն Սիրանուշն էր, որ կտրիճ քաջությամբ դիմագրավելուց հետո, հաճախ մի փոքրիկ գլխապտույտով էր ազատվում, երբեմն էլ հիստերիկ ծիծաղով և իմ հարցին, թե ինչպե՞ս էր Ադամյանը այդ կետում, պատասխանում էր. «Ան ուրիշ բան էր, մա՛նչս»:

Հետո, շատ հետո հասկացա, թե ինչո՞վ էր ուրիշ բան Պետրոսը Համլետում:

Եվ եկել եմ այն եզրակացության այսօր, թե նա, շնորհիվ անխնա ինքնախարազանման, ստիպում էր ենթարկել իրեն կերպարին այդ կետում... և չէր իսկ մտածում, ի պատիվ նրա հիշատակին պետք է ասեմ, որ շմտածեց կերպարը իրեն ենթարկել թեկուզ և մի լուպե խաղի ընթացքում:

Այս բոլորից զատ Համլետի դերակատարութեան շուրջ կա մի նրբութիւն եւ, որ բացատրելի չէ բառերով եւ որը կարելի է հիմնավորել խոշորագոյն պացումների խաշաձեւումով: Երբ ժամանակը առիթ է տալիս նման խաշաձեւումի, մարդիկ այդ երկու տանջարանում են մնում: Եւ մեր փոքրիկ, շատ փոքրիկ ժողովրդին վերապահված էր շատ մեծ պատիւ, բայց մենք չկարողացանք հպարտանալ նրանով, չկարողացանք ըստ արժանւոյն ոչ գնահատել, ոչ սիրել այն, ինչ մեր սեփականութիւնն էր մի կարճ ժամանակ:

Այդ Աղամյանի երևույթն է իր ծնունդից հարլուրավոր տարիներ առաջ մինչև իր օրերը զանազան ազդութիւնների թատերաբեմերում կաթիլ առ կաթիլ հալաքված թատերական արվեստի անհատնում հարստութեան: Յուրատեսակ մի ժառանգորդ եղավ Աղամյանը, առանց այդ մեծ հարստութեան լավագոյնի համար նախապատրաստական մի մեծ աշխատանք կատարելու: Եւ հակառակ իր նվաղ հասակին, շնչին, նվաղ առողջութեան, արձագանքը եղավ այդ բոլոր արվեստի՝ մի քիչ մեղանում, մի քիչ էլ մեղանից դուրս, եւ դնաց ասուլի նման, ինչպես եկել էր ասուլի նման մեր անարեւ երկնքում: Թող տարօրինակ չթվա հիմա այս տեսութիւնը մի պատկառելի հայ մարդու սիրելի սովերի մասին, բայց դարեր ու դարեր արվեստը կուտակվելով մարդկային բնութեան որեւէ անկյունում, որեւէ անկյունից էլ պոռթկում է, եւ այդ երևույթի սկիզբն ու պատճառը կանխագուշակելը մարդուն չի տրված: Քանզի ո՛չ տաղանդով, ո՛չ աշխատունակութեամբ անհատը չէր կարող իր սեփական արժանիքը դարձնել հարստութիւնը, որ բոլորինն էր, կամ համայնականը չուրացնել: